



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 9

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2016 Թ. ԱՊՐԻԼԻ 28-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Պետական քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման վիճակը ամբիոններում:
2. Ասպիրանտական ընդունելության քննությունների հարցաշարերի քննարկում և հաստատում:
3. Տեղեկատվություն պրոֆ. Մ. Ասատրյանի 90-ամյակի և «Մաթևոսյանական ընթերցումներ» գիտական նստաշրջանների մասին:
4. Հայոց լեզվի ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
5. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքի սկզբում նա տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 29 անդամներից այս պահին նիստին մասնակցում են 22-ը, ապահովված է անհրաժեշտ քվորումը: Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի 9-րդ նիստի օրակարգը:

1-ին հարցի առիթով արտահայտվեցին պրոֆ. Ա. Ավագյանը և ամբիոնների վարիչներ պրոֆ. պրոֆ. Ս. Մուրադյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, Ն. Հարությունյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Ս. Գրիգորյանը և Վ. Պետրոսյանը: Նրանք մասնավորապես նշեցին, որ իրենց ամբիոններում պետական քննությունների, ավարտական աշխատանքների և

մագիստրոսական թեզերի պատրաստման վիճակն ընթանում է բնական հունով. շատ խրախուսելի է, որ, ի տարբերություն նախորդ տարիների, այս ուսումնական տարում որոշվել է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը կազմակերպել բուն պաշտպանություններից 2 շաբաթ առաջ, որը շրջանավարտներին հնարավորություն է տալիս պատշաճորեն շտկելու տեխնիկական թերությունները, բովանդակային առկա առանձին թերացումները... Ֆակուլտետի դեկանն առանձնակի նշեց մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ն. Հարությունյանի բարեխիղճ աշխատանքն այդ առիթով. հիշյալ ամբիոնը 3 օր շարունակ կազմակերպել է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանություններ և գրանցել բարձր արդյունքներ:

Օրակարգի **2-րդ** հարցի առիթով էլույթ ունեցավ պրոֆ. Ա. Ավագյանը: Նա ներկայացրեց համապատասխան ամբիոնների՝ ասպիրանտական ընդունելության քննությունների տրամադրած հարցաշարերը, որոնք մանրամասն քննարկվելուց հետո հաստատվեցին գործածության:

Օրակարգի **3-րդ հարցի՝** պրոֆ. Մ. Ասատրյանի 90-ամյակի և «Մաթևոսյանական ընթերցումներ» գիտական նստաշրջանների մասին տեղեկատվություններով հանդես եկան պրոֆ. Ա. Աբաջյանը և դոց. Ս. Գրիգորյանը: Նրանք հանգամանորեն ներկայացրին իրենց ամբիոնների կատարած նախապատրաստական աշխատանքները և վստահեցրին, որ գիտական 2 նստաշրջաններն էլ կանցկացվեն պատշաճ մակարդակով:

Օրակարգի **4-րդ հարցը** նվիրված էր հայոց լեզվի ամբիոնի տարեկան հաշվետվությանը: Ամբիոնի վարիչ պրոֆ. Յու. Ավետիսյանը զեկուցեց հետևյալը.

«Հայոց լեզվի ամբիոնը շարունակում է իր գիտական և ուսումնական բնականոն աշխատանքները:

Ամբիոնի գիտական ուսումնասիրության ուղղությունները բազմազան են, բայց շատ որոշակի՝ արդի հայերենի կանոնարկման հարցեր, արևելահայերենի և արևմտահայերենի առնչություններ, թարգմանչական գործ, հաղորդակցման և խոսքի մշակույթի արդիական հիմնախնդիրներ և այլն: Նշված ուղղություններով իրականացվում են գիտական և մեթոդական աշխատանքներ:

Այս ուսումնական տարում հրատարակվել են Ա. Մարգարյանի «Ստուգաբանություններ» մենագրությունը (համապատասխան առաջաբանով), «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասընթացի գործնական աշխատանքների ձեռնարկը՝ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանողների համար /հեղ.՝ Ա. Աղիլխանյան, Կ. Միքայելյան, Ա. Մանուկյան/, Մփյուռքի՝ արևելահայերենով ուսուցանվող դպրոցների համար հայոց լեզվի դասագիրք /«Հայոց լեզու. 5-րդ դասարան». հեղ.՝ Յու. Ավետիսյան, Հովհ. Զաքարյան՝ սփյուռքի նախարարության հանձնարարականով/:

Տպագրության են երաշխավորվել մեկ մենագրություն, գործնական աշխատանքների երկու ձեռնարկ և մեկ մեթոդական ուղեցույց. դրանք են «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» շարքի գործնական աշխատանքների երկրորդ ձեռնարկը՝ բնագիտական ֆակուլտետների ուսանողների համար (հեղ.՝ Գ. Ներսիսյան, Շ. Գևորգյան, Ս. Կիրակոսյան, Ս. Գաբրիելյան և Ա. Քամայան), «Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ. ձևաբանություն»՝ հայ բանասիրության ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողների համար /հեղ.՝ Բ. Ներսիսյան, Ա. Տեր-Մինասյան, Ա. Մովսիսյան, Զ. Աղաջանյան, Ռ. Սաղաթելյան, Ռ. Մարգարյան/, «Խոսքիմասային տեղաշարժերն արդի հայերենում» մեթոդական ձեռնարկ /հեղ. Զ. Աղաջանյան/:

Պաշտպանության է երաշխավորել թ ե կ ն ա ծ ու ա կ ան եր կ ու ա տ ե ն ա խ ու ս ու լ թ յ ու ն ՝ Ռիմա Համբարձումյանի «Անկախ դերբայները արևելահայերենում և արևմտահայերենում» և Դոնարա Մկրտչյանի «Մկրտիչ Սարգսյանի արձակի լեզուն»:

Ամբիոնի աշխատակիցները հանրապետական հանդեսներում և ժողովածուներում տպագրել են տասնհինգից ավելի գիտական հոդվածներ:

Հոկտեմբերին հայոց լեզվի պատմության ամբիոնի հետ համատեղ կազմակերպած «Աբեղյանական ընթերցումներ» գիտաժողովում զեկուցումներ են կարդացել ամբիոնի 11 դասախոսներ:

Ամբիոնը հատուկ կարևորություն է տալիս արդի հայերենի նորմավորման խնդիրների ուսումնասիրությանը: Նոյեմբերին Համազգային հայ կրթական մշակութային միության հետ անցկացված միջազգային գիտաժողովը նվիրված էր այդ հարցերին: Զեկուցումներ կարդալու հայտեր էին ներկայացվել նաև արտերկրից՝ Ավստրիա, Կանադա, Ֆրանսիա, Լի-

բանան, Գերմանիա և այլն: Գիտաժողովին զեկուցումներով մասնակցեցին ամբիոնի 7 դասախոսներ: Երկու գիտաժողովի նյութերը տպագրության ընթացքի մեջ են և առանձին գրքերով կիրատարակվեն մեկ ամսվա ընթացքում: Ամբիոնը հետամուտ է Հայերենի բարձրագույն խորհրդի, այսպես կոչված, վերագործարկմանը և պարբերաբար մասնակցում է տարբեր մակարդակներում ընթացող քննարկումներին:

Ամբիոնի աշխատակիցները մասնակցել են համալսարանական և հանրապետական գիտաժողովների:

ՀՀ ԿԳ նախարարության Գիտության կոմիտեի կազմակերպած այս տարվա թեմատիկ աշխատանքների մրցույթում ամբիոնը շահել է ծրագիր՝ «Արդի հայերենի կանոնարկման և զարգացման հիմնախնդիրները» խորագրով. ծրագիրը իրականացնում են Յու. Ավետիսյանը, Լ. Ավետիսյանը, Լ. Թեյանը և Լ. Սարգսյանը:

Ամբիոնն ունի հեռակա ուսուցման երեք ասպիրանտ:

Պարբերաբար թարմացվում և արդիականացվում են մագիստրոսական ծրագրերը. մասնավորապես ավելացվել են թարգմանչական գործին վերաբերող դասընթացները:

Ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյանի անմիջական և նախանձախնդիր աջակցությամբ ամբիոնը նախապատրաստում է և եկող ուսումնական տարում իրականացնելու է բակալավրական մասնագիտացված նոր ծրագիր. կոչվում է «Թարգմանչական գործ»:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ **Լ Ս Ե Ց Ի Ն** – «Հայոց լեզվի պատմության» ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Աբաջյանը, Լ. Հովսեփյանը և Բ. Գ. Թ., դոց. Ն. Դիլբարյանը: Նշվեց, որ ամբիոնի հիմնադրումից ի վեր սա նման աշխատություն կազմելու առաջին փորձն է: «Հայոց լեզվի պատմության» գիրքը ուսանողության շրջանակում մեծ պահանջարկ ունի: Ձեռնարկը համապատասխանում է նման գիտական աշխատանքին ներկայացվող պահանջներին և չափանիշներին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – «Հայոց լեզվի պատմության» ձեռնարկը ներկայացնել հրատարակության:

Լ Ս Ե Ց Ի Ն - «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի գործնական աշխատանքների ձեռնարկ»-ը (բնագիտական ֆակուլտետների ուսանողների համար) տպագրության երաշխավորելու հարցը: Հեղինակներն են՝ Ս. Գաբրիելյան, Շ. Գևորգյան, Մ. Կիրակոսյան, Գ. Ներսեսյան, Ա. Քամայան:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը և դոց. դոց. Լ. Թեյանն ու Բ. Ներսիսյանը:

Նշվեց, որ ձեռնարկը նախատեսված է բնագիտական ֆակուլտետներում «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» առարկայի գործնական աշխատանքների համար: Առաջադրանքները վերաբերում են լեզվի տարբեր մակարդակներին՝ հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն, և խոսքի մշակույթի բազմազան հարցերին: Նկատի են առնվել նաև գործնական պարապմունքներին ըստ ծրագրի հատկացվող ժամաքանակը, ուսանողների մասնագիտությունն ու հայոց լեզվի իմացության մակարդակը, ուստի թե՛ լսարանային, թե՛ արտալսարանային աշխատանքների համար նախատեսված առաջադրանքները դասախոսը կարող է հանձնարարել նախընտրությամբ: Սույն ձեռնարկի խմբագիրներն են դոց. Գոհար Ներսեսյանը և Մարիամ Կիրակոսյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի գործնական աշխատանքների ձեռնարկ»-ը երաշխավորել տպագրության:

Վերջում գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց նիստի բոլոր մասնակիցներին, և նիստը հայտարարվեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ